ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-ԻՆ ԺԱՄԸ 11-00-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

- ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Առնակ Ավետիսյանի
- Արմավիր համայնքի ղեկավար՝ Դավիթ Խուդաթյանի
- Մեծամոր համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյանի
- Արաքս համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյանի
- Խոյ համայնքի ղեկավար՝ Արգիշտի Մեխակյանի
- Փարաքար համայնքի ղեկավար՝ Դավիթ Մինասյանի
- Բաղրամյան համայնքի ղեկավար՝ Շանթ Առաքելյանի
- Ֆերիկ համայնքի ղեկավար՝ Ռուստամ Հասանյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի Գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Սաթենիկ Թովմասյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական՝ Ֆելիքս Պողոսյանի
- ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ՝ Արթուր Գալստյանի
- <<Արմավիր>> ՋՕԸ-ի գործադիր տնօրեն՝ Վահագն Արշակյանի
- <<Էջմիածին>> ՋՕԸ-ի գործադիր տնօրեն՝ Բագրատ Հովհաննիսյանի
- <<Շենիկ>> ՋՕԸ-ի գործադիր տնօրեն՝ Սամվել Սարգսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների
- Լրատվամիջոցների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2022 թվականի մայիսի 6-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Էդվարդ Հովհաննիսյան-

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2022 թվականի առաջին եռամսյակի բյուջեներով պլանավորված սեփական եկամուտների հավաքագրման և այդ ուղղությամբ համայնքապետարանների կողմից երկրորդ եռամսյակի ընթացքում իրականացվելիք վարչարարության վերաբերյալ

/Էդվարդ Հովհաննիսյան-

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ
Վարազդատ Մկրտչյան- Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետարանի
ֆինանսական և սոցիալ-տնտեսական
զարգացման վարչության պետ/

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկի և դրա շրջանակներում պարարտանյութերի ձեռքբերման ու բաշխման ընթացքի վերաբերյալ

/ Արթուր Այվազյան –ՀՀ Արմավիրի մարզպետարանի

գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

4. 2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների վերաբերյալ

/ Արաքսյա Սարգսյան–Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետարանի

իրավաբանական բաժնի ավագ մասնագետ/

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում ավտոմեքենաների հնամաշ թափքերը և այլ մետաղական կոնստրուկցիաները որպես ջարդոն հանձնելու գործընթացի արդյունավետ կազմակերպման միջոցառումների մասին

/ Գևորգ Գևորգյան–ՀՀ

Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և

հանրապետական գործադիր մարմինների

հարցերով վարչության ՀԳՄՏՍ

գործունեության համակարգման բաժնի պետ /

6. Հայտարարություններ՝

6.1 Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի ապրիլի 22–ի N 02/07.19/12845–2022 հանձնարարականի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի մայիսի 4–ի N ԳՍ//11098–2022 գրության ներկայացման վերաբերյալ

/ Լիաննա Հարությունյան –ՀՀ Արմավիրի մարզպետարանի

իրավաբանական բաժնի պետ–գլխավոր իրավաբան/

6.2 Տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերաբերող իրավական հարցերի պահանջների կատարման ապահովում և պարզաբանում

/ Լիաննա Հարությունյան –ՀՀ Արմավիրի մարզպետարանի

իրավաբանական բաժնի պետ–գլխավոր իրավաբան/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, ողջունելով նիստի մասնակիցներին, մարզի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր սահմանած << **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2022 թվականի մայիսի 6-ի նիստի օրակարգը հաստատելու մասին** >> որոշման նախագիծը:

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի խորհրդի

Որոշումը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2022 թվականի մայիսի 6–ի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30–ի N 647-Ն որոշմամբ սահմանված մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգի 12–րդ կետի պահանջով.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը

որոշում է՝

1. **Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2022 թվականի մայիսի 6–ի նիստի օրակարգը:**

Մինչև օրակարգային <<**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2022 թվականի առաջին եռամսյակի բյուջեներով պլանավորված սեփական եկամուտների հավաքագրման և այդ ուղղությամբ համայնքապետարանների կողմից երկրորդ եռամսյակի ընթացքում իրականացվելիք վարչարարության վերաբերյալ** >> երկրորդ հարցի կապակցությամբ հիմնական զեկուցմանն անցնելը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը իրազեկման կարգով մարզի խորհրդի մասնակիցներին ներկայացրեց եկամուտների հավաքագրման հիմնական ցուցանիշների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, որի համաձայն 2022 թվականի մարտի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից ընդամենը եկամուտների պլանավորումը կազմել է 2709578.1 հազ.դրամ՝ 2021 թվականին պլանավորված 2852191.4 հազ. դրամի համեմատ կամ պակաս է պլանավորվել 142613.3 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 2206012.4 հազ. դրամ , 2021թվականի հավաքագրված 2118907.8 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 87104.6հազ. դրամով, կատարվել է 81.4%-ով, նախորդ տարվա 74,3%-ի համեմատ:

2022 թվականի մարտի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների պլանավորումը կազմել է 982999.2 հազ.դրամ՝ 2021 թվականին պլանավորված 730486.6 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 252512,7 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 749678,3 հազ. դրամ, 2021 թվականի հավաքագրված 690402,0 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 59276,2հազ. դրամով, կատարվել է 76,3%-ով, նախորդ տարվա 94,5%-ի համեմատ:

2022 թվականի մարտի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից անշարժ գույքի հարկի պլանավորումը կազմել է

215392,5հազ.դրամ՝ 2021 թվականին պլանավորված 209665,5 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 5727,0 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 113673,9 հազ. դրամ , 2021 թվականի հավաքագրված 125710,6 հազ. դրամի համեմատ, կամ պակաս է հավաքագրվել 12036,7հազ. դրամով, կատարվել է 52,8%-ով, նախորդ տարվա 60,0%-ի համեմատ:

2022 թվականի մարտի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից փոխադրամիջոցների գույքահարկի պլանավորումը կազմել է 400124,6 հազ.դրամ՝ 2021 թվականին պլանավորված 264311,0 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 135813,6 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 332409,7 հազ. դրամ , 2021 թվականի հավաքագրված 303337,6 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 29072,1հազ. դրամով, կատարվել է 83,1%-ով, նախորդ տարվա 114.8%-ի համեմատ:

2022 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական տուրքերի գծով պլանավորումը կազմել է 55625,2 հազ.դրամ՝ 2021 թվականին պլանավորված 31558,3 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 24066,9 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 57772,3 հազ. դրամ , 2021 թվականի հավաքագրված 43726,7հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 14045,6 հազ. դրամով, կատարվել է 103,9%-ով, նախորդ տարվա 138.6%-ի համեմատ:

2022 թվականի մարտի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից պետական տուրքերի գծով պլանավորումը կազմել է 16675.0 հազ.դրամ՝ 2021 թվականին պլանավորված 12325.0 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 4350.0 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 17838.1 հազ. դրամ , 2021 թվականի հավաքագրված 12873.3հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 4964.8 հազ. դրամով, կատարվել է 107,0%-ով, նախորդ տարվա 104.4%-ի համեմատ:

2022 թվականի մարտի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից հողի և գույքի վարձակալության գծով պլանավորումը

կազմել է 43751,5 հազ.դրամ՝ 2021 թվականին պլանավորված 40934,2 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 2817,3 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 32466,0 հազ. դրամ , 2021 թվականի հավաքագրված 27035,1հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 5430,8հազ. դրամով, կատարվել է 74,2%-ով, նախորդ տարվա 66,0%-ի համեմատ:

2022 թվականի մարտի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական վճարների գծով պլանավորումը կազմել է 208501.5 հազ.դրամ՝ 2021 թվականին պլանավորված 144174.3 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 64327.2 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 128882.0 հազ. դրամ , 2021թվականի հավաքագրված 121132.0հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 7750.0հազ. դրամով, կատարվել է 61.8%-ով, նախորդ տարվա 84,0%-ի համեմատ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, ըստ հարկատեսակների իրականացված հավաքագրումների վերաբերյալ վերը նշված տեղեկատվության ներկայացմամբ, գոհացուցիչ չհամարելով գրանցված ցուցանիշները, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց՝ գործնական միջոցներ կիրառել կիսամյակային կտրվածքով հավաքագրումների մակարդակը բարելավելու ուղղությամբ:

Այնուհետև, օրակարգային առաջին հարցի առնչությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վարազդատ Մկրտչյանը իր զեկուցմամբ մարզի խորհրդի նիստի մասնակիցներին ներկայացրեց **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2022 թվականի առաջին եռամսյակի բյուջեներով պլանավորված սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ համայնքապետարանների կողմից երկրորդ եռամսյակի ընթացքում իրականացվելիք վարչարարության վերաբերյալ տեղեկատվությունը:**

Նա տեղեկացրեց, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության կողմից ամփոփվել են մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները, որի արդյունքում որոշ ցուցանիշների մասով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշներից:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջի համաձայն, որպես սեփական լիազորություն, ֆինանսների բնագավառում համայնքի ղեկավարը տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Տեղեկացվում է նաև, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի դեռևս 2019 թվականի փետրվարի 19-ի N 01/13/00772-2019 շրջաբերական գրությամբ համայնքներին ներկայացվել է տեղական հարկերի հետ կապված դրամական պարտավորությունների հարկադիր կատարման վերաբերյալ մեթոդական ցուցումներ, ինչպես նաև տեղական հարկերի գծով ընդունվելիք վարչական ակտերի և դրանց վերաբերյալ ծանուցումների ձևանմուշներ, առաջարկով՝ տեղական հարկերի գծով առաջացած հարկային պարտավորությունների կատարումն ապահովող գործընթացները կազմակերպելիս առաջնորդվել ներկայացված մեթոդական ցուցումներով, ինչպես նաև տեղական հարկերի գծով ընդունվելիք վարչական ակտերը և դրանց վերաբերյալ ծանուցումները կազմել ներկայացված ձևանմուշներին համապատասխան: Իսկ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի մարտի 19-ի N 01/6.2/01437-2019 շրջաբերական գրությամբ համայնքներին իրազեկվել է, որ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասն ուժը կորցրած ճանաչվելու արդյունքում, 2018 թվականի ապրիլի 1-ից սկսած, համայնքի ղեկավարների համար չկան սահմանափակումներ արտադատական կարգով համայնքին դրամական պարտավորություններ ունեցող անձանց նկատմամբ համայնքների ղեկավարների կողմից ընդունված համապատասխան վարչական ակտերը դրամական պահանջի կատարման մասով դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն ներկայացնելու գործում:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, հիմք ընդունելով վերոնշյալը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց՝

ա/առաջնորդվելով մարզպետարանի կողմից ներկայացված մեթոդական ցուցումներով, հավաքագրման արդյունավետ գործընթացի ապահովման գործում որդեգրել միասնական մոտեցում և գործելաոճ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովելով բռնագանձման աշխատանքների իրականացումը,

բ/տեղական հարկերը, տուրքերը և վճարները, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարները չվճարող խոշոր (հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամից ավելի) պարտքատերերի նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառել վարչարարության համապատասխան միջոցներ: Քանի որ սեփական եկամուտների թերի հավաքագրումների առկայության դեպքում չեն իրականանա համայնքների զարգացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր:

Օրակարգային երրորդ հարցի <<**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկի և դրա շրջանակներում պարարտանյութերի ձեռքբերման ու բաշխման ընթացքի վերաբերյալ** >> զեկուցմամբ հանդես եկած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը ընդգծեց, որ 2022 թվականի գարնան նախապատրաստական աշխատանքներին մարզպետարանը, մարզի համայնքները, ջրօգտագործողների ընկերությունները և տնտեսավարող գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները և ֆերմերները սկսել են դեռևս 2021 թվականի նոյեմբեր – դեկտեմբեր ամիսներից՝ մարզի զարգացման գերակա ուղղությունները և առաջնահերթ խնդիրները որոշելով և դրանք լուծելու համար համապատասխան ծրագրերի մշակմամբ: Որպես բուսաբուծական ուղղվածության մարզ՝ դեռևս ձմեռվանից կարևորվել է գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստական փուլը: Որպես ձեռքբերում, անհարաժեշտ է արձանագրել այն կարևոր փաստը, որ տարեց–տարի փոխվում է մարզի հողօգտագործողների

հոգեբանությունը, նրանք դառնում են ավելի ինքնուրույն և նախաձեռնող: Ընդհանուր առմամբ, ագրարային ոլորտում տնտեսավարող յուրաքանչյուր սուբյեկտ պետական ընդհանուր ծրագրերի շրջանակում ինքնուրույն է լուծում իր տնտեսության հիմնախնդիրները, աստիճանաբար վերանում է նրանց կախվածությունը պետական համակարգից և տեղափոխվում են շուկայական հարաբերությունների ոլորտ:

Վերջին տարիներին գարնանային հրատապ աշխատանքների իրականացման շրջանակներում մարզում առաջնային տեղ են գրավում մարզի տարածքով հոսող գետերի գարնանային հեղեղումների դեմ պայքարի աշխատանքների կազմակերպումը: 2022 թվականին գարնանային հնարավոր հեղեղումները ժամանակին և արդյունավետ կանխելու նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի համապատասխան որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբը ուսումնասիրել է մարզի տարածքով հոսող Արաքս, Քասախ, Մեծամոր գետերի հեղեղատարների ափապատնեշների փաստացի վիճակը, առաձնացվել են առաջնահերթ մաքրման ենթակա տարածքները, որոնք ներկայացվել են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ինչպես նաև արտակարգ իրավիճակների նախարարություններ: Մարզի գյուղատնտեսական արտադրության զարգացմանը նպաստող կարևոր բնագավառ է հանդիսանում նաև ստորգետնյա ջրերի մակարդակի իջեցման, հողերի կրկնակի աղակալումից և ճահճացումից պաշտպանվելու նպատակով կոլեկտորոդրենաժային համակարգի անխափան գործունեության ապահովումը, որը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից վերջին տարիներին իրականացվում է առանձնակի հետևողականությամբ: 2022 թվականին նախատեսված է մարզի 12 բնակավայրերում՝ Հայկաշեն, Եղեգնուտ, Գրիբոյեդով, Արազափ, Արգավանդ, Խորոնք, Տարոնիկ, Մեծամոր, Երասխահուն, Վարդանաշեն, Ջրառատ և Առատաշեն համայնքներում մաքրել 51 կմ երկարությամբ բաց դրենաժային համակարգ:

Մարզում գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման շարքում՝ որպես արհեստական ոռոգվող երկրագործության տարածք, առաջնահերթ

նշանակություն ունի ոռոգման համակարգերի մաքրման և վերանորոգման աշխատանքների իրականացումը: Ներկա իրավիճակը ոռոգման համակարգը սպասարկողներից և ջրօգտագործողներից պահանջում է առավել կազմակերպված ու բարեխղճորեն կատարելու համակարգի կառուցման, մաքրման և վերանորոգման աշխատանքները, որպեսզի հնարավոր լինի արդյունավետ օգտագործել ոռոգման ջուրը, կորուստները հասցվեն մինիմումի: Այդ առումով,ոռոգման համակարգերի կառուցումը, պահպանումը և արդյունավետ շահագործումը մշտապես գտնվել են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի և Հայաստանի Հանրապետության կառավարության ուշադրության կենտրոնում:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի փետրվարի 28-ի N ՄՈ/128-2022 որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբը ուսումնասիրել է մարզի ոռոգման համակարգերի մաքրման և վերանորոգման աշխատանքների վիճակը ըստ բնակավայրերի: Արդյունքում, 233,3 կմ միջտնտեսային, 4981,2 կմ ներտնտեսային ոռոգման ցանցը, 338 խորքային հորերը, 62 պոմպակայանները պատրաստ են եղել ոռոգման գործընթացին:

Առանձին աշխատանքներ կիրականացվեն նաև ջրամատակարարմանը զուգընթաց: Այս բնագավառում ներկա պահին խնդիրները կապված են գետերում ջրի մակարդակի նվազման և մարզը սնուցող ջրամբարների թերլցվածության հետ:

Հունվար ամսվա ընթացքում ջերմոցային տնտեսություններն արդեն նախապատրաստվել էին գարնան գյուղատնտեսական աշխատանքներին. ներկրվել է տորֆ, ձեռք է բերվել անհրաժեշտ քանակությամբ բանջարանոցային մշակաբույսերի սերմացու, կարտոֆիլի տնկանյութ և բազմամյա տնկարկների համար արմատակալներ և տնկիներ:Ներկա դրությամբ մարզում ավարտվել է ապակյա և պոլիէթիլենային թաղանթի տակ ջերմատնային տնտեսություններում ելակի, բանջարեղենի տարբեր տեսակների ցանքի և սածիլների աճեցման աշխատանքները, ինչպես նաև շուրջ 2000 հա պոլիէթիլենային թաղանթի տակ մշակվող վաղահաս բանջարեղենի սածիլների ցանքը: Ավարտվել է բազմամյա տնկարկների էտի, ձևավորման և առաջին բուժման

աշխատանքները: Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեությունը նպատակաուղղված է հնարավորինս ամեն ինչ անելու ազգաբնակչության պահանջը տեղական արտադրության գյուղատնտեսական մթերքներով ապահովելու ուղղությամբ, հնարավորինս պակասեցնել մթերքների ներկրումը, ավելացնել մթերքների տեսականու և քանակի արտահանման ծավալները: Ավելին, ընթացիկ տարում նույնպես շարունակվում են Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման նպատակով տրամադրվող աջակցության ծրագրերը: Այսպես, մարզի գյուղատնտեսության բուսաբուծության ճյուղում առանց գիտակցված և համակցված պարարտացման սխեմաների հնարավոր չէ ապահովել մշակաբույսերի բարձր բերքատվություն: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 3-ի N 281-Լ որոշմամբ հաստատվել է հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման աջակցության ծրագիրը, որով նախատեսվում է առավելագույնը միչև 3 հեկտար հողատարածքում մշակություն իրականացնող ֆերմերներին վաճառվող պարարտանյութի վաճառքի գնի 50 տոկոսի չափով սուբսիդավորում, բայց ոչ ավելի քան 50 կգ քաշով 1 պարկ պարարտանյութի հաշվով՝ 9000 դրամը: Մարզպետարանի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված ծրագիրը, պարարտանյութեր ներկրող մատակարարների ցանկը և ծրագրի ավարտից հետո Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և մարզպետարան ներկայացվող հաշվետվությունների ձևաչափը ներկայացվել է մարզի համայնքներին՝ ի ղեկավարում: Ծրագրի գործողության մեջ մտնելուց հետո համայնքներում ձևավորվել է 5632 տոննա ազոտական, 595 տոննա ֆոսֆորական և 536 տոննա կալիումական պարարտանյութերի պահանջարկ: Ծրագրի իրականացման գործընթացում առկա խնդիրները հիմնականում կապված են մատակարարման ուշացումների հետ՝ Լարսի անցակետի հետ կապված և ֆոսֆորական ու կալիումական պարարտանյութեր ներկրող մատակարարների բացակայության հետ: Մարզպետի կողմից Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին

առաջարկություն է ներկայացվել ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի փոխարեն ներկրել <<Նիտրոամոֆոս>> տեսակի համակցված պարարտանյութ: Ներկա պահին մարզի հողօգտագործողներին մատակարարվել է 3135,5 տոննա ազոտական պարարտանյութ, որից կարբամիտ՝ 380 տոննա, ամոնիակային սելիտրա՝ 2755,5 տոննա:

Անդրադառնալով քննարկվող օրակարգային հարցի ոռոգման խնդիրների մասին, **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը ՋՕԸ-ի տնօրեններին առաջարկեց՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության և մարզի համայնքապետարանների հետ, հետևողական աշխատանքներ տանել ոռոգման արդյունավետ ապահովման գործընթացում առկա և ոռոգման սեզոնի ընթացքում ծագող խնդիրներին արագ լուծումներ տալու գործում՝ բնակչության շրջանում դժգոհությունները բացառելու նպատակով:**

Իսկ քննարկվող վերը նշված օրակարգային հարցի շրջանակներում, անդրադառնալով պարարտանյութի մատակարարման ուշացումներով պայմանավորված խնդիրներին՝ **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետը նշեց, որ արվում է հնարավորը գործընթացն առանց խոչընդոտների իրականացնելու համար: Նա միաժամանակ ընդգծեց, որ պետք է շարունակել հետևողական լինել, որպեսզի ամբողջությամբ ապահովվի գյուղացիական տնտեսություններին անհրաժեշտ քանակության պարարտանյութեր ձեռք բերելու վերջին պահանջը ծրագրով նախատեսված ժամկետում:**

Օրակարգային չորրորդ հարցի << **2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների վերաբերյալ** >> զեկուցմամբ հանդես եկած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի ավագ մասնագետ Արաքսյա Սարգսյանը նշեց, որ ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի

Հանրապետության օրենքի 96–րդ հոդվածի երրորդ մասով, 98-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի փետրվարի 25-ի N ՄՈ/126-2022 որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբը՝ մարզի Ֆերիկ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացրել է իրավական և մասնագիտական հսկողություն, որն ընդգրկել է 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակաշրջանը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու հետ կապված աշխատանքները սկսվել են 2022 թվականի մարտի 10-ին և ավարտվել 2022 թվականի մարտի 16-ին՝ 5 աշխատանքային օր տևողությամբ:

Իրականացված իրավական և մասնագիտական հսկողության բնագավառներն ընդգրկել են՝

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի ընդհանուր լիազորությունների բնագավառը,
2. Քաղաքացիների, տնտեսավարող սուբյեկտների, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառը,
3. Ֆինանսների պաշտպանության կազմակերպման և արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ծառայությունների բնագավառը,
4. Քաղաքաշինության, կոմունալ տնտեսության և հողօգտագործման, տրանսպորտի, առևտրի և ծառայությունների բնագավառը,
5. Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառը,
6. Առողջապահության, սոցիալական պաշտպանության բնագավառը,
7. Գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառը,
8. Շրջակա միջավայրի պահպանության և զբոսաշրջության բնագավառը:

Իրականացված իրավական և մասնագիտական հսկողության իրականացման արդյունքում պարզվեց, որ՝

1. Չի պահպանվել <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 9-րդ մասի բ) կետի պահանջը, համաձայն որի համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ներառում է տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին՝ համապատասխան հիմնավորումներով:

2. Չի պահպանվել <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով, ավագանու որոշած պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

3. Չի պահպանվել <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի՝ համայնքի ղեկավարը հաշվառումն իրականացնում է տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյաններում՝ ավագանու որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

4. Չի պահպանվել <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի թ) կետի պահանջը, համաձայն որի բյուջետային ուղերձը ներառում է տեղեկություններ՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկների հաստիքների միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակի, աշխատավարձի ֆոնդի մասին և այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ, ինչպես նաև

տեղեկություններ փաստացի աշխատողների (զբաղեցրած հաստիքների) միջին տարեկան ցուցակային թվաքանակի մասին:

5. Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

6. Չի պահպանվել <<Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի պահանջների կատարումը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը:

7. 2020-2021 թվականներին Ֆերիկ համայնքի գնումների պլանը չի հրապարակվել:

8.2021 թվականին համայնքապետարանի աշխատակիցներին հաշվարկված աշխատավարձը վճարելիս թերի են պահպանվել <<Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջները. մասնավորապես՝ համայնքապետարանի ներքոնշյալ աշխատակիցներին աշխատավարձ հաշվարկելիս զինծառայողների հիմնադրամ պարտադիր վճարները պակաս է վճարվել: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ համայնքապետարանի ներքոնշյալ աշխատակիցներին հանձնարարվել է սեղմ ժամկետում /մինչև 20 օր/ կատարել հիմնադրամ պակաս վճարված պարտադիր վճարների ետգանձումը՝

1. Ռուստամ Հասանյան՝ 14.000 Հայաստանի Հանրապետության դրամ
2. Անի Գրիգորյան ՝ 3500 Հայաստանի Հանրապետության դրամ,
3. Գոհարիկ Շամոյան 3500 Հայաստանի Հանրապետության դրամ,
4. Մամե Մամոյան՝ 3500 Հայաստանի Հանրապետության դրամ,
5. Հրաչյա Խաչատրյան՝ 3000 Հայաստանի Հանրապետության դրամ,
6. Ստեփան Ստեփանյան՝ 3500 Հայաստանի Հանրապետության դրամ,

Ընդամենը՝ 31.000 Հայաստանի Հանրապետության դրամ:

Զեկուցմամբ հանդես եկած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի ավագ մասնագետ Արաքսյա Սարգսյանը միաժամանակ տեղեկացրեց, որ 2022 թվականի ապրիլի 14-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի համապատասխան գրություններով Ֆերիկ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները ներկայացվել են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ինչպես նաև Ֆերիկ համայնք:

Իրավական հսկողության արդյունքում արձանագրված թերությունների վերացման վերաբերյալ որոշումները Ֆերիկ համայնքի ավագանու կողմից կայացվել են 2022 թվականի ապրիլի 29-ին և համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 4-ի N 50 գրությամբ ներկայացվել են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, օրակարգային հարցի քննարկման արդյունքներով անդրադառնալով խնդրի առկայությանը, մարզի բոլոր համայնքների ղեկավարներին առաջարկեց՝ խստագույն հսկողությամբ և անձնական պատասխանատվությամբ հետևողական աշխատանքներ տանել վերը նշված բնագավառներում տարվող աշխատանքներում առկա թերությունների բացահայտման և վերացման ուղղությամբ:

Օրակարգային << **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում ավտոմեքենաների հնամաշ թափքերը և այլ մետաղական կոնստրուկցիաները որպես ջարդոն հանձնելու գործընթացի արդյունավետ կազմակերպման միջոցառումների**

մասին >> հինգերորդ հարցի առնչությամբ զեկուցմամբ հանդես եկած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ Գևորգ Գևորգյանը նշեց, որ Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի նոյեմբերի 26-ի N 01/15.2/21130-2019 գրության պահանջի, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում նշված ոլորտի կարգավորումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության և համայնքապետարանների համապատասխան աշխատակիցների սերտ համագործակցությամբ կատարվեցին ուսումնասիրություններ մարզում գործող մետաղի ջարդոնի ընդունման և հնամաշ ավտոմեքենաների պահեստամասերի ու թափքերի վաճառքի իրականացման կետերում, ինչպես նաև տեղի ունեցան հանդիպումներ այս ոլորտում գործունեություն իրականացնող պատասխանատու անձանց հետ:

Կատարված ուսումնասիրությունից պարզվեց հետևյալը.

1.Փարաքար համայնքի վերջնամասում, Երևան-Էջմիածին խճուղու վրա գործունեություն են իրականացնում թվով 4 տնտեսավարող սուբյեկտներ:

2. Զվարթնոց թաղամասում, Երևան-Էջմիածին խճուղու վրա գործունեություն է իրականացնում թվով 1 տնտեսավարող սուբյեկտ:

3. Մայիսյան գյուղի վարչական տարածքում Երևան-Արմավիր խճուղու վրա գործունեություն են իրականացնում թվով 2 տնտեսավարող սուբյեկտներ:

4. Արմավիր քաղաքի վերջնամասում (կապույտ կամրջի դիմաց), Արմավիր քաղաքի սկզբնամասում (մուտքի մոտ), Կարմիր կամրջի տակ և Երևանյան խճուղի 11/1 հասցեում գործունեություն են իրականացնում թվով 4 տնտեսավարող սուբյեկտներ:

5. Հացիկ գյուղի վերջնամասում, կենտրոնական ճանապարհի վրա գործունեություն է իրականացնում թվով 1 տնտեսավարող սուբյեկտ:

6.Սարդարապատ գյուղի սկզբնամասում (մուտքի մոտ տեղադրված խաչի հարևանությամբ) գործունեություն է իրականացնում թվով 1 տնտեսավարող սուբյեկտ:
7. Նորապատ գյուղի 5-րդ փողոցի կենտրոնական հատվածում (<<Գազմաշ>> գործարանի հարևանությամբ) գործունեություն են իրականացնում թվով 2 տնտեսավարող սուբյեկտներ:
8. Մեծամոր քաղաքի 5-րդ թաղամասի 5/2 հասցեում (Արմավիր-Մեծամոր կենտրոնական ճանապարհի հարևանությամբ) գործունեություն է իրականացնում թվով 1 տնտեսավարող սուբյեկտ:

Հանդիպումների ընթացքում նշված տնտեսավարողների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել ակտիվացնել մետաղի ջարդոնի վերածված մեքենաների թափքերի և այլ մետաղական կոնստրուկցիաների հանձման գործընթացը, իսկ այն մեքենաների թափքերը, որոնք պարունակում են ավտոպահեստամասեր, տեղափոխել ավելի հեռու՝ կենտրոնական ճանապարհներից ոչ տեսանելի տարածքներ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, օրակարգային հարցի համակողմանի քննարկման արդյունքներով անդրադառնալով խնդրի առկայությանը և հրատապ կարգավորման անհրաժեշտությանը, նշեց, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզը աչքի է ընկնում նաև զբոսաշրջային գրավչություն ունեցող իր հարուստ պատմամշակութային արժեքներով ու վայրերով: ՈՒստի ակնահաճո չէ կուտակված ավտոմեքենաների հնամաշ թափքերի և այլ մետաղական կոնստրուկցիաների առկայությունն առնվազն միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ճամփեզրերին, քանի որ այն, մեղմ ասած, իրականում չի նպաստում մարզում զբոսաշրջության ծրագրերի պատշաճ կարգով իրականացմանն ու զարգացմանը:

Կարևորելով ներկայացված խնդրի հնարավորինս ողջամիտ ժամկետներում լուծման անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց՝ ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել նշված աշխատանքների կատարումը,

անհրաժեշտության դեպքում հանրային իրավունքի տվյալ բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով ընդունել միջամտող վարչական անհատական իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության գործընկերների **հետ համատեղ միջպետական,** հանրապետական և մարզային նշանակության ճամփեզրերին հարակից տարածքներում տվյալ գործունեությամբ զբաղվող **համապատասխան տնտեսավարող սուբյեկտներին պարտավորեցնել այդ տարածքները պարսպապատել, ինչպես նաև հետևողական լինել այդ տարածքների հողերի օգտագործման նպատակային նշանակության համապատասխանության գործընթացին և արդյունքների վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի** մարզպետարան:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման ավարտից հետո հայտարարություններով հանդես եկավ **Հայաստանի Հանրապետության** Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ–գլխավոր իրավաբան Լիաննա Հարությունյանը: Նա իր առաջին հայտարարությամբ ներկայացրեց **Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի ապրիլի 22-ի N 02/07.19/12845-2022 հանձնարարականը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի մայիսի 4-ի N ԳՍ//11098-2022 գրությունը: Նշված գրությունների ներկայացմամբ,** նա նշեց, որ <<Դատախազության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի համաձայն՝ եթե պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ դատարանների, պետական (պետական բաժնեմասով) կազմակերպությունները պետության գույքային շահերի պաշտպանության հայց են ներկայացնում դատարան, կամ նրանց դեմ պետության գույքային շահերին առնչվող հայց է ներկայացվում, որոնցով հայցագնի չափը գերազանցում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2018

թվականի ապրիլի 26-ի N 493-Ն որոշմամբ որպես պետության գույքային շահերի պաշտպանության կամ պետության գույքային շահերին առնչվող հայցի հայցագնի չափ սահմանված 10 մլն դրամը, ապա այդ մարմինները և կազմակերպությունները հայցի և գործով կայացված դատական ակտի (բացառությամբ միջանկյալ դատական ակտի) մասին տեղեկատվություն են ներկայացնում գլխավոր դատախազություն՝ հայցադիմումը ներկայացնելուց (ստանալուց) կամ դատական ակտն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նշված հոդվածի համաձայն՝ պետության գույքային շահերի, այդ թվում՝ պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետական բյուջեից համայնքներին ուղղված ֆինանսական միջոցների պաշտպանության մասով, հարուցված հայցերի և կայացված դատական ակտերի մասին տեղեկատվություն ներկայացնելը սահմանված է որպես պարտականություն տեղական ինքնակառավարման մարմինների համար: Այդ առումով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի ապրիլի 22-ի N 02/07.19/12845-2022 հանձնարարականի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի համապատասխան գրություններով համայնքների ղեկավարները, մարզպետարանի ենթակայության ուսումնական և բժշկական հաստատությունների տնօրեններն իրազեկվել են <<Դատախազության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի մասին: Նշված իրավակարգավորումները հաշվի առնելով՝ հանձնարարվել է հետայսու հարուցվող հայցերի մասով՝ խստորեն պահպանել օրենքի պահանջը՝ տեղեկատվությունը հայցադիմումը ներկայացնելուց (ստանալուց) կամ դատական ակտն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում տրամադրելու մասին, իսկ համայնքների ղեկավարներին նաև առաջարկվել է եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան ներկայացնել ամփոփ տեղեկատվություն, <<Դատախազության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան, 2018 թվականից սկսած հարուցված հայցերի և կայացված դատական ակտերի մասին,

դրանց առկայության դեպքում կցելով՝ պետության գույքային շահերի համար խնդրահարույց վերջնական դատական ակտերի օրինակները:

Նույն հարցի առնչությամբ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի մայիսի 4-ի N ԳՍ//11098-2022 գրությանը որպես պատասխան, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի մայիսի 4-ի համապատասխան գրությամբ հայտնվել է, որ մարզի համայնքներն իրազեկված են և այդ առումով անհրաժեշտ է համարվել հետայսու հարուցվող հայցերի մասով՝ խստորեն պահպանել օրենքի պահանջը: Մարզի համայնքներից ստացված տեղեկատվության հավաքագրման արդյունքում Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից ապրիլի 28-ի N 1856 գրությամբ տրամադրված <<Դատախազության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի շրջանակներում հարուցված հայցերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ–գլխավոր իրավաբան Լիաննա Հարությունյանն իր երկրորդ հայտարարությամբ անդրադարձավ **Տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերաբերող իրավական հարցերի պահանջների կատարման ապահովմանը և տվեց համապատասխան պարզաբանումներ: Նա մասնավորապես նշեց, որ՝**

ա/<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածով սահմանված համայնքի ավագանու անդամի պարտականություններին վերաբերվող դրույթների կատարման պահանջների համաձայն՝ **համայնքի ավագանու անդամը պարտավոր է մասնակցել ավագանու նիստերին և քվեարկություններին,** ավագանու կանոնակարգով սահմանված կարգով անդամակցել ավագանու որևէ մշտական հանձնաժողովի, մասնակցել դրա նիստերին, չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ

խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) շահերին, ինչպես նաև **<u>ստորագրել իր մասնակցությամբ ընդունված փաստաթղթերը:</u>**

բ/Համայնքի ավագանու մասնակցությամբ ընդունված փաստաթղթերի ստորագրումը կարգավորվում է նաև <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով, որի բացակայությունը կարող է առաջացնել իրավական հետևանք, մասնավորապես՝ նշված հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջի համաձայն՝ համայնքի ավագանու անդամի լիազորությունները, ի թիվս այլնի, վաղաժամկետ դադարեցվում է նաև, եթե նա մեկ տարվա ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների կամ մշտական հանձնաժողովի նիստերի (**<u>որը պետք է արտացոլված լինի իր մասնակցությամբ ավագանու նիստերի ընթացքում ընդունված փաստաթղթերի ստորագրություններով</u>**) ավելի քան կեսից:

գ/Նույն օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի համաձայն՝ ավագանու 9 և ավելի անդամ ունեցող համայնքի ավագանու նիստի օրակարգում ընդգրկվող հարցերը պետք է նախապես քննարկվեն ավագանու իրավասու հանձնաժողովում: Քննարկման արդյունքում ձևավորված կարծիքը կցվում է ավագանու նիստի օրակարգի նյութերին:

դ/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի համապատասխան շրջաբերական գրություններով պարբերաբար ապահովում ենք պատշաճ իրազեկում ոլորտը կարգավորող իրավական ակտերում կատարվող փոփոխությունների և լրացումների մասին, ինչպես նաև մեր կողմից առաջարկվել է օգտվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների **նախարարության պաշտոնական կայքէջի <<Տեղական ինքնակառավարման համակարգ>> բաժնի <<մեթոդական ուղեցույցներ և օրինակելի ձևեր>> ենթաբաժնում (<u>http://www.mtad.am/hy/methodological-guides/</u>) հրապարակված նյութերից, որոնք մշակված նախագծեր են և որոնցով կարող են ղեկավարվել նաև համայնքապետարանների աշխատակազմերը:**

ե/Անդրադառնալով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջով տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ավագանի և համայնքի ղեկավար) կողմից ընդունված որոշումները մարզպետարան առաքելու ժամկետների վերլուծության արդյունքներին՝ փաստվում է, որ համայնքների ղեկավարների կողմից ընդունված որոշումների գերակշռող մասը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան են առաքվում պահանջվող յոթնօրյա ժամկետի խախտմամբ, կամ՝ դրանք առհասարակ չեն առաքվում:

զ/Հաշվի առնելով այն հանգամանքը, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 62-րդ հոդվածի պահանջի համաձայն ավագանու հերթական նստաշրջանները գումարվում են փետրվարի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև հունիսի վերջին չորեքշաբթին և սեպտեմբերի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև դեկտեմբերի վերջին չորեքշաբթին, իսկ նստաշրջանի ընթացքում յուրաքանչյուր ամիս հրավիրվում է ավագանու առնվազն մեկ նիստ, ուստի **առաջարկվում է կարևորել նույն օրենքի 5-րդ գլխով նախատեսված համամասնական ընտրակարգով ընտրվող ավագանի ունեցող համայնքներում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները**, ինչպես նաև նույն օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ ավագանու 9 և ավելի անդամ ունեցող համայնքի ավագանու նիստի օրակարգում ընդգրկվող հարցերը պետք է նախապես քննարկվեն ավագանու իրավասու հանձնաժողովում: Քննարկման արդյունքում ձևավորված կարծիքը կցվում է ավագանու նիստի օրակարգի նյութերին:

է/<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ գլխով ամրագրված են օրենսդրական տեխնիկայի կանոնները, համաձայն որի 11-14-րդ հոդվածներով սահմանված են նորմատիվ իրավական ակտի վավերապայմանները, կառուցվածքը, դրանց **մասերը, դրանց համարակալումը և վերնագրերը, իսկ 33-34-րդ հոդվածներով՝ նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելը և դրանց կատարելու ընդհանուր կանոնները: Քանի որ, ինչպես համայնքի**

ավագանին, այնպես էլ համայնքի ղեկավարը հանդիսանում են որպես իրավաստեղծ մարմիններ, ուստի անհրաժեշտ է խստագույնս պահպանել նաև <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնները ևս:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը անդրադառնալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ–գլխավոր իրավաբան Լիաննա Հարությունյանի կողմից արված հայտարարություններին, **մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց՝ խստագույնս պահպանել և առաջնորդվել վերը նշված իրավակարգավորումներով:**

Օրակարգային հարցերի և հայտարարությունների քննարկմամբ և ամփոփմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը Արմավիրի մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

Հայաստանի Հանրապետության

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 5/10/2022 11:26:58 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Արմավիրի մարզպետ՝
Էդվարդ Հովհաննիսյան

Արձանագրող՝
Դ. Դավթյան-
Քարտուղարության պետ